

վերայ մեզաց, պարտք ի վերայ պարտուց, կահ ի վերայ կահուց :

Հապս կուսակրօն ախարիններու հրապարակը. Աստուած անփորձ պահէ անոնց ալ նուիական բխացան, որ օր մը՝ գէթ օ՛ր մը միայն հազար տարուան մէջ՝ Ս. Սահակով մը կամ Ս. Ներսէս Շնորհալիով մը փոխարինեն հանրութեան վրայ իրենց ծանրացուցած պճղնաւոր բեռը . . . :

Վաճառականութիւնը վառեցունող միւս պատճառ մըն է ժառանգութիւնը, որ կիյնայ հօրմէ կամ մօտաւոր աղագականներէ գործի անվարժ չօրիկ աշխարհիկ ուսողներու՝ անկարող գործ մը հիմնելու կամ շարունակելու և իրենց կտակողին սարքուած գործը կանոնաւորապէս քաննեցունելու : Ի՛նչ քրայնքով շինուած հիւսնուած արուեստական ու վաճառական առուներ՝ քայքայուած են այսպիսի պատրաստ ուսողներու ձեռքով . որպէսզի իրենց քրտահն ու հանճարով հարստացող հարց որդիք մտնող, վասնող, աւերող, անդոյր և պանդոյր չըլլան՝ լատագոյն և կանոնաւորագոյն է կրթել մեծցունել անոնք իրենց հարց և պաշտպաններուն անցած նեղ ճամբով, կամ անկէ նուաղագոյն չափ լայն ճամբով մը՝ միշտ հսկողութեան ներքեւ, և ճախարակել այնպիսի կազապարի մը վրայ՝ որ հեռի ըլլայ լայն այն արահետներէն, որոյ նմոյշները կը փալփլին Բերայի շիտակ ճամբէն մինչև եւրոպական մարաքաղօքներու մեծ ու պերճ պուլըվառները . . . :

Ասոնց կցորդ կուգայ միամիտներուն ցոցառէր չըռուսյութիւնը, հագուստի, կապուստի, ճայի փետուրներու, երեկոյթներու, պալոներու, թատրերու ևյն ևյն . ծայրայեղօրէն սիրահար, որով կը դառնան կըլլան ունայնութեանց գնայուն մոտարաներ՝ ի վրաս իրենց հօր, ամուսնոյն, եղբոր և այլն : Գիւղական և արուարձան-